ARMENIAN

NHS
Greater Glasgow and Clyde

ՏՖ

Հակատուբերկուլոզային բուժման մասին տեղեկագիրք

(թարգմանված է անգլերենից)

Խորհրդատվության համար դիմել.

Տուբերկուլոզ (ՏԲ)

Տուբերկուլոզը (ՏԲ) մանրե է (բակտերիա), որը թեև ունակ է ախտահարելու մարմնի յուրաքանչյուր օրգան, առավել հաճախ ախտահարում է թոքերը:

Տուբերկուլոզը ամբողջությամբ բուժելի է ճիշտ հակաբիոտիկ դեղահաբերը ճիշտ տևողությամբ ընդունելու դեպքում:

Դեղահաբերը դադարեցրեք միայն Ձեր բժշկի կամ ՏԲ բուժաշխատողի ցուցմամբ:

ՏԲ դեղորայք

Դեղորայքն անհրաժեշտ է ընդունել նվազագույնը 6 ամիս շարունակ, որոշ դեպքերում՝ ավելի տևական:

ՏԲ բուժման սկզբանական շրջանում ընդունելու եք 3 կամ 4 տարբեր տեսակի հակաբիոտիկ դեղահաբեր, իսկ բուժման մնացած ժամանակահատվածում՝ 2 կամ 3:

Ինչպես ընդունել ՏԲ դեղորայքը

- Դեղահաբերը պետք է ընդունել ամեն օր՝ նախաճաշից 30 րոպե առաջ:
- Բոլոր դեղահաբերն ընդունեք միասին առավոտյան՝ որպես մեկ դեղաչափ:
- Ամենօրյա դեղաչափը բաց մի թողեք: Առավոտյան մոռանալու դեպքում, ընդունեք դեղահաբերը օրվա ընթացքում:
- Միշտ ունեցեք հաբերի բավարար պաշար՝ ձեռք բերելով նոր չափաբաժին մինչև առկան սպառելը:

Խուսափեք

ՏԲ բուժման ընթացքում խուսափեք արևառությունից: Արևի ուժեղ լույսի տակ գտնվելիս օգտագործեք բարձր գործակցով արևապաշտպան քսուք: Հակատուբերկուլոզային որոշ դեղահաբեր կարող են մաշկն ավելի զգայուն դարձնել արևի ճառագայթների նկատմամբ:

Կողմնակի ազդեցություններ

- Կարող է նկատվել մեզի, քրտնքի, աչքից արտադրության կարմրավուն կամ նարնջագույն երանգավորում: Այս կողմնակի ազդեցությունը անվնաս է: Փափուկ կոնտակտային ոսպնյակները կարող են գունաթափվել:

- Հակատուբերկուլոզային հաբերը կարող են նվազեցնել հակաբեղմնավորիչ բերանային հաբերի և այլ հակաբեղմնավորիչների ազդեցությունը: Դա նշանակում է որ պետք է նաև կիրառեք հակաբեղմնավորման վստահելի պատնեշային մեթոդ, օրինակ՝ պահպանակներ: Դիմեք Ձեր բժշկին կամ դեղագործին հակաբեղմնավորման տարբեր մեթոդների մասին խորհրդատվություն ստանալու համար:
- Հակատուբերկուլոզային դեղահաբերով բուժման ընթացքում Ձեր բժիշկը կարող է փոփոխել Ձեր այլ դեղամիջոցների դեղաչափերը, այդ թվում Warfarin դեղորայքը, հակացնցումայինները, ստերոիդները, մեթադոնը, բայց բժիշկը կհարմարեցնի դրանք ըստ անհրաժեշտության:

ՏԲ որևէ դեղորայքի հետ դժվարության բախվելիս չդադարեցնեք այն ընդունելը և բաց մի թողեք դեղաչափը: Դիմեք Ձեր բժշկին կամ ՏԲ բուժաշխատողին օգնություն սատնալու համար:

Եթե Ձեր մոտ առկա են հետևյալ կողմնակի ազդեցությունները, անհապաղ դիմեք Ձեր ՏԲ բուժաշխատողին կամ բժշկին.

- փսխում,
- տենդ,
- տեսողության խախտում,
- տևական ցան կամ քոր,
- մատների կամ ոտնամատների ծակծկոց:

Դեղորայքի կուրսը վաղաժամ չընդհատեք

Ինքնազգացողության լավացման հետ համընթաց կարևոր է չտրվել դեղորայքի կուրսը վաղաժամ դադարեցնելու գայթակղությանը:

Կուրսի վաղաժամ դադարեցումը կհանգեցնի նրան, որ հիվանդածին մանրեների աճը կշարունակվի և դրանց բուժումը **կբարդանա:**

Դուք հարկադրված կլինեք ընդունել ավելի շատ դեղահաբեր ավելի **երկար ժամանակ**, երբ մանրեները **ձեռք բերեն հակաբիոտիկների** հանդեպ տոկունություն:

Դա նշանակում է, որ հակաբիոտիկները այլևս չեն կարողանա ոչնչացնել Ձեր մարմնում առկա մանրեները:

Դուք նար վտանգելու եք Ձեր **ընտանիքի** անդամների, ընկերների կամ Ձեր հետ շփվողների առողջությունը՝ ենթարկելով նրանց Ձեր **ՏԲ մանրեներով վարակման ռիսկի:**

Կիրառվող ՏԲ դեղորայքը:

Կամ երբեմն 2-3 հակաբիոտիկներ համակցված են մեկ հաբում

Voractiv	
Rifater	
Rifinah	
Ethambutol	

Կարող է նաև նշանակվել հետևյալ ՏԲ դեղորայքը:

Rifampicin	
Isoniazid	
Pyrazinamide	
Pyridoxine (վիտամին B6)	

ՀԻՇԵՔ.

- ՏԲ-ը բուժելի է ճիշտ բուժման արդյունքում,
- Հակաբիոտիկ դեղահաբերը անհրաժեշտ է ընդունել ամեն օր ըստ բժշկի ցուցման,
- Հակաբիոտիկ դեղահաբերի ընդունումը ինքնակամ չդադարեցնեք,
- Աշխատեք կանոնավոր հաճախել առողջապահական բոլոր հանդիպումներին և բժշկական այցերին: